

### 5.3. 2014 թվականի մայիս ամսվա հիդրոոդերևութաբանական պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, մայիսին օդի միջին ամսական ջերմաստիճանը հանրապետությունում եղել է նորմայից բարձր 2-3 աստիճանով (Արարատյան դաշտավայրում՝ 1.5 աստիճանով):

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից բարձր 1-5 աստիճանով, երկրորդ տասնօրյակում՝ 1-3 աստիճանով, երրորդ տասնօրյակում՝ նորմայի սահմաններում մի փոքր դրական և բացասական շեղումներով:

Միջին առավելագույն ջերմաստիճանն Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում կազմել է +25 +29°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +22 +26°C, Արագածոտնի և Սյունիքի նախալեռներում՝ +19 +22°C, ՀՀ Լոռու մարզում՝ +18 +21°C, ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +15 +20°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է մայիսի 17-ին: ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի հովիտներում գրանցվել է +28 +33°C, Արարատյան դաշտավայրում՝ +29 +31°C, ՀՀ Լոռու մարզում և Արագածոտնի նախալեռներում՝ +23 +28°C, Սյունիքի նախալեռներում՝ +23 +26°C, ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +17 +22°C (ք.Գյումրիում (ՀՀ Շիրակի մարզ)՝ +25°C):

Միջին նվազագույն ջերմաստիճանը ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում կազմել է +3 +8°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +6 +10°C, ՀՀ Տավուշի մարզում և Արագածոտնի նախալեռներում՝ +8 +13°C, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ +12 +15°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է մայիսի 4-ին: ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում և Սյունիքի նախալեռներում գրանցվել է 0 +5°C, ՀՀ Լոռու մարզում՝ +4 +9°C, ՀՀ Տավուշի մարզում և Արագածոտնի նախալեռներում՝ +5 +10°C, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ +7 +11°C:

Ամսական տեղումների քանակը ՀՀ Լոռու մարզում կազմել է նորմայի 110-150%-ը, Արարատյան դաշտավայրում՝ 120-150% (ք.Արտաշատում (ՀՀ Արարատի մարզ)՝ 229%, ք.Արմավիրում (ՀՀ Արմավիրի մարզ)՝ 78%), ՀՀ Տավուշի մարզում՝ 80-107%, ՀՀ Շիրակի մարզում՝ 120-190% (ք.Արթիկում՝ 80%), ՀՀ Սյունիքի մարզում՝ 76-144%, ՀՀ Արագածոտնի մարզում՝ 89-102%, ՀՀ Կոտայքի մարզում՝ 68-109%, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 50-119%:

Մայիսի 1-4-ին, 7-8-ին, 10-11-ին, 15-ին, 17-19-ին, 24-ին, 26-ին և 28-31-ին առանձին շրջաններում, 9-ին, 12-14-ին, 20-23-ին, 25-ին և 27-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ: Մայիսի 5-6-ին և 16-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Մայիսի 7-ին, 10-ին, 14-ին, 17-19-ին, 21-23-ին, 25-ին, 27-ին և 29-ին առանձին վայրերում դիտվել է մառախուղ 50-500 մ տեսանելիությամբ: Մայիսի 1-3-ին, 5-7-ին, 9-10-ին, 13-ին, 22-23-ին, 25-ին և 28-30-ին տեղ-տեղ դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 7-22 մ/վրկ, պոռթկումները՝ 14-25 մ/վրկ (Պուշկինի լեռնանցքում (ՀՀ Լոռու մարզ)՝ 47 մ/վրկ): Մայիսի 3-ին, 7-ին, 11-ին, 22-ին և 25-ին տեղ-տեղ դիտվել է կարկուտ 5-35 մմ տրամագծով:

Ջրի միջին ամսական ելքերն Ախուրյան, Հրազդան, Մարմարիկ և Սևջուր գետերում կազմել են նորմայի 15-60%-ը, Փամբակ, Դեբեդ, Աղստև, Քասախ, Ազատ, Վեդի, Արփա, Ողջի և Սևանա լճի ավազանի գետերում՝ 40-90%, Ձորագետ, Տաշիր, Մեղրի և Որոտան գետերի ավազաններում՝ 100-110%: Մայիսի 31-ի դրությամբ ջրի լցվածությունն (ծավալ) Ախուրյանի ջրամբարում կազմել է 268 մլն. խոր. մ, Արփիլիճ ջրամբարում՝ 40.7 մլն. խոր. մ, Ազատի ջրամբարում՝ 48.7 մլն. խոր. մ և Ապարանի ջրամբարում՝ 23.9 մլն. խոր. մ:

Սևանա լճի մակարդակն ամսվա ընթացքում բարձրացել է 15 սմ-ով և մայիսի 31-ի դրությամբ կազմել 1 900.50 մ, որը հավասար է 2013թ. նույն օրվա մակարդակին: